

# ՀԱՅԵՐՆ ԻՐՐ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՈՏԻՑ ԿԱՅԱՆ ՀՆԴԿԱՍՏԱՆԻ ՄԷՋ

## Խ Օ Ջ Ա Յ Ի Ս Ր Ա Յ Է Լ Ս Ա Ր Հ Ա Գ

Անցեալ տարուան «Բազմավեպ»ի Մարտ - Յուլիս պրակին մէջ (էջ 94-96), հրատարակած էինք Տիար Մ. Յ. Սեթի «Ամենահին Քրիստոնէայ Շիրիմը Կալիսրայի մէջ» խորագրով յօդուածը: Անոր մէջ՝ պատուարժան Հեղինակը յառաջ բերած էր Բրոքֆ. Ուիլսոնի դրուատալից խօսքերը ժէ դարուն՝ Կալիսթայի Հայոց և մասնաւորապէս Խօջայ Սարնաղի մասին, որուն ճարտար ու յաջող քաղաքականութեամբ, Անգլիացիք կրցեր էին նոյն ատենուան Հնդկաստանի Մոդոլ կառավարութենէն ստանալ կարեւոր առանձնաշնորհութիւններ՝ ի նպաստ իրենց նորահաստատ Գաղութին:

Այս անգամ Տիար Սեթ մեզի կը յղէ ուրիշ շատ հետաքրքրական յօդուած մըն ալ Խօջայ Սարնաղի քաղաքական մեծ դերին ու գործունէութեան վրայ, հրատարակուած «Bengal: Past and Present» Եռամսեայ Հանդէսին մէջ: Ահա սոյն յօդուածն է որ, անգլիերէնէ թարգմանելով, մեծ հաճութեամբ կ'արտատպենք հոս, զանց ընելով անոր առաջին մասը, որ արդէն բովանդակուած է վերոյիշեալ նախորդ յօդուածին մէջ: Եանօթ. Թրգմ. Հ. Փ. Ե.

Այս նշանաւոր գործողութենէն վերջ, Խօջայ Սարնաղ, ըիջ մը ժամանակ աչքէ անհրեւոյթ կ'ըլլայ: Յայտնապէս ինք աւելի ճարտար մէկն էր իբր Գաղաքական Գործիչ քան թէ իբր վաճառական:

1713ին, Սարնաղ դարձեալ երեւան կու գայ իբր բանակցող: Այդ միջոցին Անգլիացիք մտադիր էին պատգամաւորութիւն մը զրկել Տելհիի նոր Կայսեր՝ Փարրուք Սիյարի, որուն երբեմնի խաղընկերը՝ Սարնաղ՝ մեծապէս օգտակար եղաւ նախնական կարգադրութեանց գործին մէջ: Սարնաղ, Խօջայ Մանուր անունով ուրիշ Հայու մը միջոցաւ, որ այն ատեն պաշտօն կը վարէր Աուրունգեպի դասեր՝ Պատիշահ Պելոււմի քով, համոզեց Կայսրը հասպ-իւլ-հուքում<sup>1</sup> մը հրատարակելու, որով կը հրամայուէր բոլոր տուպաններու, կառավարիչներու և այլ ամէն պաշտօնէից որ հսկեն ու ընկերեն մեր առ Կայսրն

առաքած նուէրին՝ իրենց երկիրներէն անցած պահուն, մինչեւ անոր Արքունիք հասնիլը՝ Անգլիացոց և Խօջայ Սարնաղի հետ:

Ուստի զարմանալի չէ որ, երբ հուսկ նուէրը ճամբայ կը զրուէր, Սարնաղ անուանուէր իբր երկրորդ անձ՝ պատգամաւորութեան գործին մէջ:

1714ի Յունիս Ծին, «Միաձայն հաւանութեամբ որոշուեցաւ որ Խօջայ Սարնաղ, որուն ազդեցութիւնը Արքունեաց մէջ արդէն ունեցեր էր իր բարի արդիւնքը ու մեզի հայթայթեր էր հասպ-իւլ-հուքումը և ուրիշ օգտակար արքունական հրամանագիրներ, զրկուի Կայսեր քով՝ անոր ֆարմանը ձեռք բերելու գործին աշակցելու համար. և թէ ինք Խորհուրդին մէջ բազմի ու քուէարկէ երեք Անգլիացի պարոններուն հետ»: Ու յետոյ արձանագիր մատեանը կ'աւելցնէ. «Հարկ անհրաժեշտ է զրկել այնպիսի մէկը որ կատարելապէս տեղեակ ըլլայ պարսկական լեզուին ու քաջ ըմբռնող մեր գործերուն ինչպէս նաեւ ամէն բանի որ մեզի կրնայ

1. Հասպ-իւլ-հուքումը, վեզիրին կնիքով, պաշտօնական հաւատագիր մըն էր, որ կը հարկադրէր հնազանդիլ Կայսեր ֆարմանին: